

պիսիկոսի յԱխլցոյ անպատշաճ թուելով մեզ, առաջադրեմք ձեզ. ծանուցանել զայսմանէ նմին Սրբապետական Կաթողիկոսին, զի համբերեցէ առ ժամանակ ինչ, մինչև ծանուցուի զդիպաւոր ժամանակն արաքելոյ, քանզի արդէն աստ գոլով նա ինքն Կարապետ Արքեպիսկոպոսն, զուցէ անձամբ անձին ներկայացի այդ նմին Վահագնաթեան, եթէ ոչ արկցին ի մէջ պատճառք արդելոյ:

Ղենարալ Կենեղ Բէհրուզալայ եղբայր Գալիթ անուն զկնի աւուրց ինչ ունի ճանապարհորդել յայդ կոյս. ընդ նմին ունիմք ուղղելորել զպարտ ու պատշաճ դրութիւնս թէ առ Վասիլի Կենեղ Բէհրուզովն, եւ թէ առ գրագիր նորին պարոն Նիկողայոսն Տէր Շմաւոնեանց, ըստ որում անձն աշխատաւոր եւ պիտանի: Նաեւ զորացոյցան՝ զորս ինքերեալ էր ձեր:

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանեայց Յովհաննէս:

Համար 28.

Ի 17 Յունուարի, 1831 ամի, ի Տփլիս:

Ողջոյն Հայրական սիրոյ մատուցեալ Յովսէփ եւ Ղուկաս բարձր արժանապատիւ վարդապետաց՝ ցանկամ ամենայն ցանկութեամբ սրտի եւ հոգւոյ, զի երեքանդ միով հոգով եղիջիք իբրեւ առասան երեք՝ ճարի անխելի:

Ի Թիֆլիզոյ:

Ի Յովհաննէս Արհւոյն առ իս ի 17էն Յունուարի 1831, ի 23 նորին ստացեալ ամսեան:

Գերապատիւ Բարսեղ Արքեպիսկոպոս, Յովհաննէս, Յովսէփ եւ Ղուկաս վարդապետք բարձր պատուոյ արժանաւորք Սիրեացեալք ի մէնջ:

Ձեզ չորեցունցդ զինչ ինչ զկարեւորացն տեղեկութիւն չնորհեցէ զերապատիւ Արքեպիսկոպոսն Սերոբէ յողջամբ ժամանելն իւր այդր:

Ձայս մի ինչ առաջի առնեմ սիրելեացդ ի մի հոգի շողկապելոց, զի զգուշաւոր խոհեմութեամբ ջան զիջիք պահել յամենայնի զյարգ նորուն Արքեպիսկոպոսի արժանապատիւն զպատուաբարութեամբ, ընթանա-

լով միշտ ըստ ըզձանաց սրտի նորա, եւ ունելով զաջարուրջ արթնութիւն յամենայն ի բանս կամ ի խօսս ձեր ընդ նմա՝ զգուշացէք չերեւցուցանել զօտարութիւն ինչ երեւակ ընդդիմակ նորայն կամաց:

Յաղագս իրաց Մանուէլ եւ Յարութիւն վարդապետաց եւ Գէորգայ Արարատովի՝ զորոց գրեալ էր ձեր Յովհաննէս վարդապետ ի թղթի անդ ձերում ի 15էն այսր ամսեան համարով 5, մնայ մեզ խօսել զարժանաւորն ի գալ մեր այդր Տեառն յաջողութեամբ: Ընկալեալ եւ զթերթիկն ձեր ի 22էն սորին ամսեան՝ հանդերձ գրութեամբ սրբազանապատար Տեառն՝ եմք բարեացաւ կամ միշտ

Ձեր չորեցունցդ

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանեայց Յովհաննէս:

Համար 52.

Ի 30 Յունուարի 1831 ամի, ի Տփլիս:

Բարձր արժանապատիւ Յովհաննէս վարդապետ.

Ձինչ ինչ իրաց զկարեւորագոյն տեղեկութիւնս մարթիս իմանալ ի գերապատիւ արքեպիսկոպոսէն Սերովբէէ. զոր որչափ կարիցէ քո փոյթ կալցիս սրտազիւր պահել արժանապատիւն յարգանք պատուաբարութեամբք, զի է այր պիտանի բազմօք սրբոյ Աթուոյդ:

Գրեալն ի քէն թուղթ հաս առ իս ի 2 Փետրուար ամսոյն ընդ նմին եւ գրութիւն սրբազանապատար Տեառն. որոց տեղեակ եղաք եւ լիցուք դիտաւորութեացն:

Ձգիւրն գրեալ յանուն Սերովբէ Արքեպիսկոպոսի ստացեալ մեր յետ ելանելոյ նորա աստի ի 2 Փետրուար. առաքեմք այժմ ընդ սմին, հասուսջիք ինքեան:

Յովհաննէս վարդապետն Սահակ եպիսկոպոսեան աւարտեալ զպարտաւորութիւն քարանդակին՝ յետ աւուրց ինչ ունի մտանել այսր. եթէ կանխաւ ծանուցեալ էր մեր զգալ նորա ի քարանդակին՝ հոգ տանէաք արդեօք զերծուցանել զնա անտի փութով:

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանի Յովհաննէս:

Ի 7 Փետրուար 1831, ի Տփլիս:

Գերապատիւ եղբոր Սերովբէ Արքեպիսկոպոսի մատուցանելով յիմմէ կողմանէ զողջոյն՝ ասացես զի ծանուցէ մեզ զորպիսութիւն ճանապարհին՝ ընդ որ եկն ինքն այդր:

(Շարունակելու):

Ո. ԱՐԱՆԱՄԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ՍՅՈՒՄՈՒՆՈՅ ՂԱՏՄՈՒԹԵՆ
ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻ ԲԵՕՄԻՐՃԵԱՆ

Գ Լ Ո Ւ Ս Զ.

(Շարունակելու):

Տող 308:

Աշխատեցաք վարդապետ՝ Նրստոյք ի նաւակս որ սպասման. Փոքր մի քէյֆիկ հասցնեմք՝ եւ գնամք ծովովս ի սէյրան.

Շատ յոգնեցանք՝ վարդապետ, եկիր նստինք նաւը, որ պատրաստ է, քիչ մ'ալ ծովուն վրայ շրջելով զբօսնունք. կ'ըսէ, ու նաւակը երբեւ թէ վախորի եւրոպական ափերն ի վեր քերել տալով, երբեմա շէլէպի՝ եր հիւր վարդապետին կը սկսի ցոյց տալ ճամբանուն վրայ գտնուած բոլոր կարեւոր շէքերը, բանուն վրայ գտնուած բոլոր կարեւոր շէքերը, մզկիթները, նշանաւոր տեղերը եւ այլն:

Տող 326: Այս տողին մէջ կը յիշէ՝ «Տօլմա պաղչէ» կոչուած ծովագրը, ուր կանգուն է Սուլթանական շքեղ պալատը, զոր շինած են Պալեան մեծանուն Հայ ճարտարապետներն արքունի, ինչպէս նաեւ ուրիշ շատ պալատներ Չրաղանի, Պէյլէրպէյի եւ այլն:

Տող 336.

Ի Պէշիկթաշ գետ կամիս՝ Փոքր մի Հայք ժամատամբ աստ կան: Այսինքն թէ որ կուզես գիտնալ թէ ինչ կայ Պէշիկթաշի վերերը, հոս կ'ըսէ, կան սակաւաթիւ

Հայեր, որոնք ունին իրենց ժամատունը (մատուռ):

Այս ժամատունը, անշուշտ պէտք է հաստատուած ըլլայ, 1661, 1681—1684ի միջեւ, այն թուականներուն՝ երբ երեմիա Չէլէպի իւր պոլսական տեղագրութիւնը կը շարադրէր:

Հ. Ղուկաս Ինճիճեան 1794ին հրատարակած իր «Ամարանոց բիւզանդեան», երկին մէջ կը յիշատակէ այս եկեղեցին գրելով՝

Ի քարեշունչ թաղ ի Պէշիքթաշին, էր եկեղեցի՝ եւ Հայոց Ազգին. փոքրիկ հոգետուն՝ Սուրբ Աստուածածին, Զակեալ ի վաղուց՝ կոռուով ինչ շինչին:

Ըսել է՝ որ 1794էն շատ առաջ քան զուած էր այդ եկեղեցին, բայց թէ երբ, այդ չի նշանակեր Հ. Ինճիճեան: Սարգիս Գպիր Սալթի Յովհաննէսեան իր 1800ին շարադրած Կ. Պոլսոյ նկարագրութեանը մէջ՝ երբ կը խօսի Պէշիքթաշի եկեղեցիին վրայ անոր քանդման ժամանակն ալ կը նշանակէ ըսելով.

Գոյր եւ աստանօր եւ ժամատուն մի Հայոց փոքրիկ, յանուն Սուրբ Աստուածածին: Բայց քակեցաւ յայլազգեաց պատճառաւ չնչին ինչ կոռույ ի թուս. հիմնէթին 1172, յամի Տեառն 1759:

Ուրեմն գարու մը մօտ էր գոյութիւնը այդ եկեղեցիին, երբ կը քակուէր 1759ին, եւ կ'երեւի թէ քակուած ալ կը մնար մինչեւ եւ կ'երեւի եւ Սարգիս Գպիրի ժամանակները Ինճիճեանի եւ Սարգիս Գպիրի ժամանակները (1794 եւ 1800), որովհետեւ այս երկու հեղինակներն ալ անցեալի մը յիշատակութիւնը կ'ընին «էր», «գոյր» ըսելով:

Միայն թէ, հաւանակութենէ զուրկ չեմ համարիր ենթադրել, որչափ որ այդ եկեղեցին 1759ին կը քանդուի, տարիներ վերջը բան մը կը շինուի անոր տեղը՝ գուցէ գաղտնաբար, որովհետեւ 1776 թուին Սերաստացի Տէր Պիւրի քահանայ Մանուէլեան գիւղին գերեզ-մանատունը վերջնականապէս ձեռք բերելու կը յաջողի, ինչպէս կ'աւանդեն մեզ այդ գերեզմանատունին Արձանագրութիւնները, զորս անձամբ ընդօրինակած եմ 1910ին, եւ զորս կարեւոր կը համարիմ ներկայացնել հոս.

Երբեք հատ են ատոնք. առաջինը կը գտնուի,

1 Ամարանոց բիւզանդեան, Հ. Ղ. Ինճիճեան, Վենետիկ, ի Ս. Ղազար 1794, էջ 122:

գերեզմանատունին մուտքի դրան վերեւ՝ երկաթագիր երեք տող փորագրուած սապէս,

Գերեզմանատուն Հայոց Գնեալ ի Տէր Կիւրեղ Բահանայէ Մանուէլեան Սերաստացոյ Յամի Տեսուն 1776 եւ ի Թիւ Հայոց ՌՄԻԾ յունիս 9 ի Պէշիքթաշ:

Երկրորդը ութը տող՝ բոլորագիր փորագրուած է եւ կը գտնուի ներքին դրան վրայ, հետեւեալ կերպով,

Հայս Գերեզմանատուն Հայոց Ազգի գնեալ է Տ. Կիւրեղ Բահանայ ի 1776 ամի եւ ՌՄԻԾ: Եւ ապա ի 1849 ամի որմնապատ պարսպեաց ծախիւքիւրովք Կարապետ Ամիրայ Պալեան արքունի ճարտարապետ, որ եւ հանգեալ ի Տէր ի յոյսն ամենեցուն ի 1866 ամի:

Գժուար չէ գիտնալ որ սոյն Արձանագրութիւնները Գերեզմանատունին որմնապատ կողմէն վերջը, նոյն իսկ Կարապետ Ամիրային մահէն՝ 1866էն յետոյ զետեղուած են այդ դուռներուն ճակատը, բայց գնման թուականը քաղուած է Տէր Կիւրեղի տապանաքարէն, որ կը կենայ Գերեզմանատունին մէջ եւ ունի երկաթագիր 14 տող, երկու մասէ բաղկացած հետեւեալ Արձանագրութիւնը (երրորդը ըստ կարգին):

ՏՐ ԿԻՒՐԵՂՍ ՊԵՇԻՔԵՏԱՇ Ծ ԱՄ ԿԵԼՈՎ 2ՈՐՍ ԱՆԳԱՄ ԱՅԼԱԶԳԻՆ ԶԱՐՏՍ ԳՆԵԼՈՎ 4ԱԶԻԵ ԵՂԵԻ ԻՆՉ ՄԻԼԻՔ ՍԵՓԱԿԱՆԵԼՈՎ ԸԱՏ ՓՈՂ ԳՆԱՑ ԻԶՆԻՆ ԿԵՏԻՏ ԱՍԵԼՈՎ ԸԻՆԵՑԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ ՅԻՇԱՏԱԿ ԳՈՂՈՎ ԽՆԴՐԵՄ ԱԶԳԵՍ ԻՄԷ ՈՐՔ ԱՍՏ ԴԻՊԵԼՈՎ ՅԻՇԵԼ ԶՄԵՂԱՊԱՐՏՍ 4ԱՅՐ ՄԵՐ ԱՍԵԼՈՎ ԹԻԻ 1776 ՌՄԻԾ 119. ՅՈՒՆԻՍ

ԱՅՍ Է ՏԱՍԱՆ ՍԵՐԱՍՏԻՈՑ ԻԳԵՂԶԷ 4ՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՎԱՆԻՑ ՏՐ ՄԱՆԻ ԷԼԻ ՈՐԴՈՑ ՆԵՐՍԷՍԻ ՈՐԴԻ ՄՀՏՈՒՐ ՏՐ ԿԻՒՐԵՂԻՆ, Ի 4ԱՆԴԻՍԻ ԳՐՈՑ ՎԱՐԹԵԱԼ ԱՐՏԱՔԻՆ ԵՒ ԱԾԱՅԻՆ ԸՆՈՐՀՕՔՆ. ԼԻ ՑԻ Ի ՏՈՒՆԷ ԱՅՑ, ԹՎՆ ՌՄԼ ԵՒ ՓՐԿՈՒԹԻՒՆ

Առաջին մասը Տէր Կիւրեղին բերնէն գրուած, կը յայտնէ Գերեզմանատունին գնման թուականը՝ 1776. իսկ երկրորդ մասը կը նշա-

նակէ թէ Տէր Կիւրեղ Տէր Մանուէլ անուն քահանայի մը թոռն է եղեր Սերաստացի ու վախճանած է ՌՄԼ (1230 + 551) 1781ին:

Տապանագրին առաջին մասէն կ'ուսանինք թէ Տէր Կիւրեղ 50 տարի մնացեր է Պէշիքթաշ. ըսել է 1731ին արդէն կը քահանայագործէր հոն. եւ ակնատես եղած էր անշուշտ եկեղեցիին քանդումին, որ ո՛վ գիտէ ի՞նչ մեծ ցաւ ազդեց անոր սիրտին:

Իւր կոչումին մեծապէս հաւատարիմ եւ իւր հօտին համար անձնգիր հովիւ մը եղած է այս քահանայն, եւ ապացոյցը այն է որ Գերեզմանատուն մը ունենալու համար, անոր հողը այսինքն արտը՝ ինչպէս ինքը կը գրէ, քանիցս բազում փող վատնելով կը գնէ այլազգիներէն:

Այս Գերեզմանատունը կը գտնուի Պէշիքթաշի բարձունքին վրայ, ճիշդ Երլտրդ կոչուած կայս. պալատին առջեւը: Երբ Սուլթան Համիտ 1876ին գահ բարձրանալով եկաւ բնակիլ այդ պալատը, շատ չանցած ուղեց որ Հայ Ազգին այդ վաղեմի պատմական շիրմատանը բոլորովին անհետանար, ննջեցեալները փոխադրուէին այլուր: Պատրիարք եւ Ազգ. Ժողով իրար անցան եւ կրցան զայն ձեռքէ չհանել: Բայց Գերեզմանաքարերը ամբողջովին հողածածուկ ընել տուին եւ որոշեցին այլ եւս մեռել չթաղել հոն:

Նոյն Սուլթան Համիտը Օրմանեան պատրիարքի օրով դարձեալ ուղեց որ այդ Գերեզմանատունը պարպուի եւ իւր պալատին պարտէզներուն խառնուի: Օրին մէկը պատահամբ պատրիարքին քովը գտնուելովս, երբ իմացայ իրմէն, թէ կայսերական նոր հրաման մը վերստին կը պահանջէր որ հոնկէ հանուին բոլոր թաղուածներուն ոսկերոտիքն ու տապանաքարերը, դիտել տուի՝ թէ ատենօք Պէշիքթաշի այդ գերեզմանատունին մէջ ժանտախտաւորներ թարղուած պէտք է ըլլան, հիմա զանոնք ծածկող հողերը տակնուվրայ ընելով, արդեօք ժանտախտի միջրոպները վերակենդանութիւն չի պիտի ստանային:

Օրմանեան այս խօսքին ինդաց եւ ըստ թէ պիտի ջանայ զայն շահագործել. քանի մը օր վերջը լսեցի, որ արդարեւ գիր մը ուղղած էր կայս. պալատ, շեշտելով ժանտախտաւորներու կէտը, եւ սուլթանը ապագայ համաձայնակի մը վախէն այլալոյս, հրամայեած էր՝ յետաձգել առ ժամայն՝ թաղուածներուն փոխադրութեան խնդիրը. ինչպէս Օրմանեան սրբազան անցողակի կերպով գրած է այս իրողութիւնը, իւր Յիշատ

տակարան անուն հրատարակութիւններուն մէջ (1909ին) անշուշտ առանց իմ անունս յայտնելու:

Եւ Պէշիքթաշի այդ հինաւուրց Գերեզմանատունը մնաց ու մնաց այնպէս, անգործածելի, մինչեւ 1908, օսմ. սահմանադրութեան հռչակուած տարին, որ ատեն խումբ մը երիտասարդներ իրենց առաջնորդ ունենալով Միհրատապալան (նահատակուած 1915 ապրիլ 20ին), սկսան Գերեզմանները ծածկող հողերը պեղել, վերցունել, եւ երեւան հանել բոլոր վերաբերելի, որոնք կը վերաբերէին պէշիքթաշաբնակ հայ երեւելի հին ընտանիքներու:

Այս պեղումներու շնորհիւ երեւան ելաւ Տէր Կիւրեղի տապանաքարն ալ եւ անոր հետ նաեւ երկու կարեւոր քարեր, որոնց մէկ հատը ամենահին, կը վերաբերէր սափրիչի մը՝ Գաբրիէլ մեռած 1751ին. իսկ միւսը Գրիգոր անուն նահատակի մը, որ ունի 1792 թուականը:

Սոյն քարերուն Արձանագրութիւնները զորս դարձեալ անձամբ ես օրինակած եմ 1910ին, հոս ներկայացանել պատշաճ կը համարիմ:

Առաջինը ինը տող է, խոշոր երկաթագիր փորագրուած, սապէս,

Այս է Տապան հանգրստեան. Սեփաստացի, Տէր Թորոսի. Որդի, ցանկեալի, Գաբրիէլ. Մազելի, մահ քոյ. ողբալի. արար զիս, լալի ծաղիկ. Մոնե նի, կանանչ, վարդենի՝ եղա ի շիրմի. ի հող տապանի. ով որ հանդիպի ասէ Աստուած ողորմի. Թվ ՌԻԾին (1200 + 551 = 1751):

Ծնողական վշտակոծ սրտէ բղթած տողեր են ասոնք. կ'երեւի թէ հանգուցեալ Գաբրիէլը շատ երիտասարդ էր, որ տապանագրին մէջ կը նմանցուի նոնենի կարմիր (լալի) ծաղիկին եւ կանանչ վարդենիի: Տապանագրին վարի կողմը շինուած է կրթաւոր հայելի մը՝ քովիկն ալ՝ ամելի մը, ինչ որ կը նշանակէ թէ մեռնողը սափրիչ էր արհեստով:

Իսկ 1751 թուականը ապացոյց է՝ զի Գերեզմանատունը վաղուց կը պատկանէր հայերուն, այսինքն Տէր Կիւրեղին կատարած չորրորդ անգամ վերագնումէն ճիշդ քառորդ դար մը առաջ:

Երկրորդ Արձանագրութիւնը վեց տող երկաթագիր փորագրուած է եւ է՝

Այս է Տապան հանգրստեան վլանկացի Ասլաուրի որդի նահատակ Բարունճի Գրիգորին որ հանգեալ ի կեանս Թվ ՌՄԽԱ մարտի Ի: (1241 + 551 = 1792):

Տապանագրին ճակատը փորագրուած է կախուած մարմին մը, նշանակ թէ Գրիգոր նահատակուած է կախաղանի վրայ, գիրերուն անմիջապէս ներքեւը կան մուծակ շինելու գործիքներ, որոնց ի տես՝ այցելուն կը գիտնայ թէ հանգուցը արհեստով մուծակագործ (բաբուճի) եղած է, ինչպէս տապանագրին չորրորդ տողն ալ կը յայտնէ:

Այս Գերեզմանատունը թաղուած են արքունի ճարտարապետ Պալեանները, Տատեան ընտանիքի անդամներ, հին նշանաւոր մատենագիր բժիշկ՝ Բեստէն Միքայէլ Տէր Պետրոսեան եւ ուրիշներ:

Պէշիքթաշի այս վաղեմի Գերեզմանատունը կը մնայ այնպէս, մինչեւ այսօր. բայց ննջեցեալ չի թաղուիր հոն:

* * * Պէշիքթաշի արդի եկեղեցին շինուած է հինին տեղը, կը պահէ իւր նախկին անունը՝ «Գիւտ Գիւտոյ Ս. Աստուածածնի» կը գտնուի գիւղին բարձունքին վրայ եւ ունի ծովահայեաց գեղեցիկ դերք: Եղական, շատ սիրուն ճարտարապետութեամբ շինուած է այն՝ քարուկիր, խաչաձեւ եւ գմբէթաւոր. զայն իր ծախքովը կառուցած է 1836—1838ին արքունի ճարտարապետ Կարապետ ամիրա Պալեան¹, ինչպէս կ'իմանանք եկեղեցիին ճակատը եղած Արձանագրութիւնէն, որ է՝

Սուրբ եկեղեցիս Աստուածամօր կուսին շինեցաւ ի 1838, ձեռամբ եւ արդեամբք պերճահամբաւ Կարապետ ամիրայի Պալեան արքունի ճարտարապետի, զորոյ տարածամ՝ մահ ի 1866, ողբասցէ

¹ Ազգ. պատմ. Օրմանեան սրբազանի, Հատոր Գ. էջ 3713:

միշտ ազգն Հայոց, որ վայելեաց
զանչափ նորա երախտիս եւ եկեղեցին
մաղթեցէ զանսպառնի կեանս երկնից:

* * *

Պէշեթմաշի թաղը վաղուց ունեցած է իւր
վարժարանը, որ փայտաշէն կայրի 1864ի
ատենները, բայց 1866ին նորաշէն կը կառուցուի
Պալեաններու եւ Տատեաններու առատաձեռ-
նութեամբ եւ կը կոչուի Մաքրունեան, ի
յիշատակ վաղաձեռնիկ ՏիկինՄաքրունեանի՝
մէկ հատիկ աղջկը Առաքել պէյի Տատեան
եւ կողակիցը ճարտարագետ Սարգիս պէյի
Պալեան:

Մաքրունեան վարժարանը՝ կանգուն է
եկեղեցիին ճիշդ դէմը, եւ Ազգին ընծայած է
ուսեալ անհասներ. այս վարժարանի նախկին
սանուհիներէն է, տաղդանաւոր Գրագիտուհի
Տիկին Ե. Աւետեսեան (Անայիս), գպրոցասիրաց
վարժարանին ինամակալութեան արդի ջանադիր
Ատենապետուհին. այս վարժարանին մէջ առած
է իր նախնական կրթութիւնը Գևտ. Միհրան
Քէհաճեան, այժմ ականաւոր բժիշկ Պարիսի մէջ,
ինչպէս նաեւ յայտնի գրագէտ Արշակ Չոպանեան:

Պէշեթմաշի եկեղեցիին մէջ՝ պատարա-
գած ու քարոզած է 1859 ապրիլ 26ին ամենայն
Հայոց նորընտիր կաթողիկոս Մատթէոս Ա.
եւ ապա հիւրասիրուած է Պալեան կարգապետ
ամիրային տունը՝ զօրավար Լորիս Մելիքովի հետ,
որ յատկապէս հրաւիրակ եկած էր Կ. Պոլիս,
կաթողիկոսը էջմիածին առաջնորդելու²:

Երկար տարիներ Պէշեթմաշի եկեղեցիին
քարոզիչ եղած է Խորէն Նար-պէյ Սրբազան,
որ վարժարանին բարեկարգութեանն ալ մեծա-
պէս հսկող եղած է:

Պէշեթմաշ եղած է բնակավայր երեւելի
ամիրաներու, որոնց յետապրածներէն էր Յա-
րութիւն բաշա Տատեան, պետական բարձրաստի-
ճան պաշտօնեայն արքունի վառօդապետ՝ բարե-
յիշատակ Յովհաննէս պէյ Տատեանի զաւակը,
որ 1896—1900 մեծ դեր կատարեց իբր
Ատենապետ ազգային վարչութեան քաղաքա-
կան ժողովին: Մեռաւ 1901 հոկտ. 7ին եւ
կայսերական հրամանաւ թաղուեցաւ Պէշեթ-
մաշի եկեղեցիին հարաւային պարտեզը:

Պէշեթմաշ չէ եղած երբեք ազգային

¹ Տէր Սահակ քահանայ Տ. Սարգսեան Պէշեթմաշի
մէջ բացած է անձնական վարժարան մը, զոր փոխարձակ
է յետոյ Օրթապէլը:

² Պարս. Հայոց, Ա. Պէրպէրեան, էջ 611:

կարեւոր շարժումներու կենդրոն, ինչպէս Խաս-
գիւղ կամ Սամաթիա եւ Իւսկիւտար, բայց
ունեցած է կարեւոր ընկերութիւններ դպրոցա-
ւէր, աղքատախնամ կամ բարեգործա-
կան. ասոնց մէջ նշանակելին է 1861ին հաս-
տատուած Հայկազեանը, որ օգտակար գիրքեր
հրատարակել տուած է ինչպէս, Բարոյականը
Պլուտարքեայ, Առաջնորդ Հայ Ընթերցա-
նութեան, Նախագիտելիք մանկանց, Իրա-
ւագիտութիւն համառօտ եւ ուրիշներ՝ որոնց
բոլորն ալ կը տպագրուէին Ղալաթիա, Միւհէն-
տիսեան տպարանը:

Պէշեթմաշի թաղն ալ այժմ կապտուած
է իր երբեմնի վառ փայլունութիւնէն. Հայ
բնակչութիւնը մեծապէս նուազած է հոն, բայց
եկեղեցին ու վարժարանը կը մնան կանգուն,
փոքրաքանակ ժողովուրդով եւ սակաւաթի-
ւաշակերտներով:

Եկեղեցիին դուրսը հարաւային որմն վրայ կը կար-
գացուի 7 տող երկաթագիր փորագրուած Արձանագրութիւն
մը, որ կը յայտնէ թէ հոն կը դրանուի հրդեհի համար ընդար-
ձակ ջրամբար մը. ահաւասիկ այն.

Երեսնաւ ջրշող Ս. Եկեղեցւոյն
ծակիւք հանգուցեալ Ազնուուհի
Պիստոս տիկնոջ, զստեր Գալուստ
Աղայի Բէմխամեան եւ կողակցին
ի յիշատակ անմահ հոգւոյն:
1865 մայիս 10:

(Շարտանակելի): ԴԿՏ. ՎԱՅՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ



ՅԵՐԳՈՆԻ ՀՈՅ ՆԱՀԱՏԱԿԻՆ

(Շարտանակելի):

Գ.

Գեր. Ս. Վ. Տէր Աբրահամեան Սրբազան
Պիոս ԺԱ.ին ուղղած իւր Ուղերձն աւար-
տում էր այսպիսի ջերմ խօսքերով.

«Երիցս երանեալ Հայր, այժմ ես պիտի
կատարեմ մի ուրիշ պարտականութիւն.
Հնորձակալութիւն պիտի յայտնեմ Ձեր
Սրբութեան, որ վճռեցիք Հայաստանի նա-
հատակի, երանելի Կոմիտաս Քէօմիւրճեանի
սրբացումը: Այս եղելութիւնը ուրախու-
թեամբ պիտի լցնէ Արեւելեան Եկեղեցու
քրիստոնեաների եւ մասնաւորապէս նրա ազ-
գակից հայերի սիրտը, որոնք քանի քանի
անգամ անազորօյն հարստահարութիւններ
կատաղութեան առարկայ են եղած, բայց

դարձեալ ամուր պահպանում են իրենց
հայրերի հաւատքը: Այս սրբացումը միւ-
թարութիւն պիտի պատճառէ ամէն կողմ
ցրուած Ձեր հայ որդիներին եւ այս նահա-
տակը օրինակ պիտի հանդիսանայ բոլոր իր
հայրենակիցներին»:

«Աղերսում եմ, Երանեալ Հայր, Ձեր
Սրբութեան օրհնութիւնը, ամբողջ հայ ժո-
ղովրդեան, հայ նահատակի երանացման
դործում աշխատողներին, Պատրիարքի եւ իր
ամբողջ նուիրապետութեան վրայ»:

Ուղերձին պատասխանեց իր Գահից
Պիոս ԺԱ. նա խօսեցաւ մօտ մի քառորդ
ժամ: Իր ճառի մեծագոյն մասը Եկեղեցու
կրաւունքներին եւ քրիստոնէական կեանքի
առաքինութեան վրայ էր եւ վերջացրեց,
իր օրհնութիւնն ուղղելով «սիրելի Հայաս-
տանին եւ հայ ժողովրդին», որոնց համար,
ասաց, փառք եւ պատիւ է իրենց մի զա-
ւակի այսօր երանացումը, դովեց հայ ժո-
ղովրդի հաւատարմութիւնը իր նախահայ-
րերի հաւատքին եւ մաղթեց, որ լաւագոյն
օրեր ծագին շուտով նրա համար»:

Այժմ մնում էր բուն եւ դիւխաւոր հան-
դէսը Ս. Պետրոս Մայր Եկեղեցում:

Հասել էր այն օրն, երբ աշխարհիս ա-
մենամեծ եւ ամենաչքեղ տաճարում, Քրիս-
տոնէութեան ամենահեղինակաւոր Գլուխը,
տանեակ հազարաւոր հաւատացեալներին
տաղմութեան ներկայութեամբ պիտի խըն-
կարկէր Պոլսեցի հայ Քահանայի պատկերի
առջեւ եւ այս կերպով պիտի նուիրադրու-
ծէր նրա երանացումը: Մի օր յառաջ Վա-
տիկանի մեծ ամենօրեան՝ Osservatore Ro-
mano պաշտօնաթերթը 6 ամբողջ սիւնակ
էր նուիրել «Հայ աւագերէց եւ մարտիրոս
էր նուիրել Կոմիտաս Քէօմիւրճեանին»: Յօ-
երանելի Կոմիտաս Քէօմիւրճեանին»:

«Սուրբերի
դուածն սկսում էր այսպէս. «Սուրբերի
պատմութիւնը Եկեղեցու եւ քաղաքակրթեալ
մարդկութեան պատմութիւնն է...: Այժմ
կարգը Հայաստանինն է, այն բիրդիական
երկրի, որ «սուրբերի եւ մարտիրոսների
ծնող է» եւ որի կրօնական եռանդը հայրե-
նասիրական եռանդի հետ մի ամբողջու-
թիւն է կազմում...: Քէօմիւրճեան Կոմի-
տաս հայ քահանան ու նահատակը, ողբեր-
գական Հայաստանի ցաւալի եւ միանգա-
մայն լուսաւոր պատկերն է հանդիսանում»:
Մայն լուսաւոր պատկերն է հանդիսանում
Այսպիսի Յառաջաբանից յետոյ Հոմէրական
Եկեղեցու պաշտօնաթերթը պատմում էր

Տէր Կոմիտասի վարքը, նահատակութիւնն
եւ երանացման դործի ընթացքը եւ վերջաց-
նում էր Պիոս ԺԱ.ի Հայաստանի եւ հայ
ժողովրդի հասցէին ուղղած սրտագին հա-
մակրական խօսքերով, որոնք յառաջ եմ բե-
րած արդէն:

Յունիս 23ին, Կիրակի օրը, Ս. Պետրոս
Հայրապետական Մայր Եկեղեցին ամբողջա-
պէս ողողում էր լոյսերի մէջ: Տաճարի
փառազարդ ճակատի վրայ կախուած էր Տէր
Կոմիտասի պատկերը, հայկական եկեղեցա-
կան զգեստով, ձեռքումը մարտիրոսական
դափնին եւ երկու կողմը երկու հրեշտակ,
երկնային ամպերի մէջ. հեռուից երեւում
էր Կ. Պոլիս քաղաքը, Ս. Սովիա մզկի-
թովը: Եկեղեցու ներքին այն մասում, որ
La Gloria է կոչւում, նոյնպէս դրուած էր
նրա պատկերն, դարձեալ հայկական զգես-
տով, մարտիրոսական դափնիով եւ երա-
նելեաց աշխարհի մէջ: Այս երկու պատ-
կերն էլ հսկայ մեծութիւն ունէին, որպէս
զի ժողովուրդը հեռուից կարենար պարզ
աչքով տեսնել: Երկու ուրիշ տեղ էլ, Ս. Հե-
ղինէի եւ Ս. Վերոնիկայի պատաշամբներից,
կախուած էին երկու խոշոր դրօշակներ,
որոնց մէկի վրայ նկարուած էր Տէր Կո-
միտասը ծնկաչոք. թուրք դահիճը սուրը
ձեռքում պատրաստուած էր նրան զլխատել:

Իսկ քովը կանգնած էր թուրք դատաւորն
իր զինուորներով: Իսկ միւս դրօշակը ներ-
կայացնում էր թրքական դատաստանը, դա-
տապարտեալ հայ քահանան կանգնած է
դաժանադէմ մեծ վէղիրի առջեւ, շրջապա-
տուած թուրք մուլաներով եւ զինուորնե-
րով: Ս. Պետրոսի եկեղեցին առաջին ան-
գամ էր այսպիսի պատկերներ տեսնում...:
Պետրոս Առաքելի հանրածանօթ բրոնզեայ
արձանը դարդարուած էր քահանայապետա-
կան զգեստով, որ միայն արտակարգ հան-
դիսաւոր օրերումն է լինում:

Կարգը թէ՛ դուրսը եւ թէ՛ ներսը պահ-
պանում էին Վատիկանի սեփական պահակ-
ներն իրենց յատուկ զինուորական համա-
զգեստով:

Հանդէսը սկսաւ առաւօտեան ժամի
10ին, Ս. Պետրոսի Աւագերէցը կարդինալ
Մէրրի դէլ Վալ իր ամբողջ եկեղեցական
խումբովը մտաւ ներս: Նրան հետեւեցան
«Մէսերի ժողովը» անդամ կարդինալներն
եւ այլ եկեղեցականները, բազմաթիւ արքե-
պիսկոպոսներ եւ եպիսկոպոսներ եւ տեղա-